ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունվարի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, հընթացս Սուրբ և Անմահ Պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն «Ակօս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի հոգու խաղաղության համար, ով դավադրաբար սպանվել էր հունվարի 19-ին Ստամբուլում:

Սուրբ Պատարագի ընթացքին քարոզեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի փոխտեսուչ Տ. Սահակ վարդապետ Մաշալյանը: Հայր Սուրբը խոսեց ճշմարտության և արդարության արժեքների մասին՝ անդրադառնալով Հրանտ Դինքի կյանքին և գործունեությանը:

Պատարագի սրբազան արարողությանը և հոգեհանգստյան պաշտոնին ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը, պոլսահայ համայնքի ներկայացուցիչներ, բազում հավատավոր հայորդիներ:

Հրանտ Դինքի հուղարկավորության արարողությունները կատարվելու են Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության Ս. Մարիամ Աստվածածին պատրիարքանիստ եկեղեցում: Նորին Սրբություն Գարեգին Բ-ի Հայրապետական տնօրինությամբ արարողություններին հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մայր Աթոռի միաբանության կմասնակցի ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ